


և այդպիսի նիւթեր՝ ինչպիսին են սպիտակուցը, ծարպը, օսյան, շաքարը և այլն չի պարունակում։ Եւ ճամարիս որ գտնադան կենդանիների թռչունների և ձկների մտեր խիստ հարուստ են լինում սպիտակուցով։ Ծարպով, բայց աղքատ օսյայով։ Հացահատիկները հարուստ են լինում օսյայով։ Բայց համեմատաբար աղքատ են սպիտակուցով։ առաւել ևս ծարպով։ Հաս ընտանեւոր կաթը արեան հետ են համեմատում և ջրային արեւն են համարում այն։ որովհետեւ նորա բաղադրութիւնը շատ նման է արեան բաղադրութեան և թւում է թէ միայն կաթը կարելի կլինի համալել իրը և իզեաւական կերակուր։ Այդ իտպապէս օխալ է։ Աչքի առաջ պէտք է ունենալ, որ շատ հասակաւոր մարդիկ դժուարութեամբ են մարում կաթը (շաւերը բոլորովին անկարող են ընդունել) և նոյն իսկ նորա բաղադրութիւնը այնքան էր կատարեալ չէ։ նորա մէջ շատ ջուր կայ։ նորա պինդ տկուցքի մէջ շատ սպիտակուց և բաւականաչափ ծարպ կայ։ Բայց օսյան, շաքարը և այլ սոյնանման կարեւոր նիւթերը քիչ են ինչպէս մսի մէջ։ Հասակաւոր մարդը միայն կաթով չի կարող կերակրուիլ։ Բայց ահա վերջերս ի մեծ զարմանս առողջաբանների, գտնուել է կերակրի համար գործածուելիք մի բոյս, որ իւր մէջ պարունակում է համարեա թէ այն բոլոր տնդարար նիւթերը, որոնք անհրաժեշտ են մարդու մարմնի կազմուածքին։ Այդ բոյսը ներկայացրած է Քրանսիական գիտութեանց ճեմարանին (ներկայացնողն է Բալլան)։ որ և վերլուծութեան ենթարկեց։ Ինչպէս վերլուծութիւնը ցոյց տուեց, այդ նիւթը պարունակում է իւր մէջ՝ 190⁰ սպիտակուցային, 60⁰ ծարպային, մոտաւորապէս 700⁰ օսյային նիւթեր և մնացած մասն էլ ջուր։ Ամենապարզ հաշուից երևում է, որ եթէ հասակաւոր մարդը ուտելու համար այդ բոյսից գործածէ օրական երկու ֆունտ (մոտաւորապէս 800 գրամ)։ այդպիսով նա ընդունած կլինի սպիտակուցի, ծարպի և այլ կարեւոր նիւթերի այն որոշեալ քանակութիւնը, որ անհրաժեշտ է համարուած։ Այդ իւր տեսակի մէջ արտասովոր և միակ նիւթը, որ կարող է իրեն կերակուր գործածուել, բաղադրանման մի բոյսի (соевое растеніе) հատիկն է, որ բուսածում է կենտրոնական Աֆրիկայում և որին ընկիկները զօանդզուս անուն են տալիս։ Այդ բոյսի գիտական անունն է *voandseia subterranea*, խիստ արտասովոր մի բոյս է։ Ուրիշ բաղադրանման բոյսերի նման նորա պտուղն ևս պատիճ (պատեան ընդեղենների) է։ Բայց այդ պատիճը կաղնուած է և հասունանում ոչ թէ վերերկրայի ցոլունի վերայ, ինչպէս սիսեմինը, լոբուին և այլոց, այլ հողի տակ, ստորերկրայի ցողունների վերայ, նշանակում է նա ևս եւրոպայում մշակուող ստորերկրայի ընկուղի նման է (земляной орехъ—*Arachis hypogaea*)։ որը վերջին տարիներում

վաճառում է ճապոնական ընկոյգ անունով և նոյն յատկանիշներն ունի։ Յիշեալ զօանդզուս բոյսի մշակութիւնը շատ ընդարձակ ծաւալ է ստացել արեւադարձային երկրներում։ Բացի Աֆրիկայից, այդ նոր բոյսը մշակում են նաև հարաւային Ասիայում, Եւրպէս և հարաւային Ամերիկայում։ զգալիաւ թիւնը նրանումն է, որ մինչև վերջին տարիներս այդ բոյսը գործադրուել է իրեն կերակուր մի միայն այն երկրներում, ուր մշակուել է։ և երբէք չի արտահանուել և եւրոպական շուկաներում չի երևացել։ Եւրոպացիք առաջին անգամ ծանօթացան այդ օգտակար բոյսի հետ միայն անցեալ տարի Փարիզեան ցուցահանդիսում։ Այդտեղ բերած էր Աօնզոյից և ի ցոյց դրուած էր քակալ—ֆրեստը, (соеа—фрестакн, haricot—pistache) անուն տակ, Վօանդզուս բոյսի հատիկը ձուածն է։ վերևում կարմիր գոյն ունի սև մարմարեայ երակներով, ներքին մասում աչքերի մօտ սպիտակ է։ Երանից ստացւում է շատ սպիտակ ալիւր, որը հում ժամանակ սիսեմի ալիւրի համ է ունենում։ իսկ եփած ժամանակ շագանակի։ Ասում են, որ համի տեսակէտից սորա այնքան նման են իրար, որ եթէ մէկը չիմանայ թէ փորձածն ինչ է, անկարող է տարբերել մէկը միւսից։ Վօանդզուս արեւադարձային երկրների յատուկ մի բոյս է, պոյ պատճառով երբէք չպէտք է սպասել, որ միջին Եւրոպայում կարելի կլինի մշակել։ Բայց գուցէ կարելի կլինի և նոյն իսկ արժէ, փորձել մշակելու այդ բոյսը մեղանում։ Վովկասում և Թուրքեստանում։ Քրանսիացիք այդ բոյսի վերայ խիստ մեծ ուշադրութիւն են դարձրել և աշխատում են մշակել տալ Ալժիրում, որտեղ իւրեանց զօրքի համար իրեն ամենալարմարաւոր պաշար մատակարարող նիւթը կարող է լինել։



ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԿՈՆԴԱԼԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿԸԹՈՒՂԻԿՈՍԻ

ՈՒՂԱԾ ԳՈՐԳԱՏԻ ԳԻՍՍԻՍՍ ԳՐՈՆԵՍՈՐԻՆ

Մառայ Յիսուսի Բիսուսի Տէր Յովնանեկս եւ Շոնիի նորին կարուղիկոս եւ Պատրիարք (Oberpatriarch) առաքելական եկեղեցւոյ Բիսուսի եւ Մերոյ Մայր Աթոռոյ, սբ. կարուղիկէ վանուցն եղիլամեի։

Հայրապետական օրհնութեամբ և սիրով ամենակարող Հոգւոյն Աստուծոյ առաքելք ողջոյն աս-

առաջադրեց զօգտոր Փեղոր Գլխախոսին, ասպետին և պետական խորհրդականին (Collegienrat), Դորպատի Համալսարանի օրենսդրութեան պրոֆեսորին, Ուրախութիւն ի Տէր Յիսուս:

2րդ բարեկենդակեան նամակը, այս տարուայ փետրուարի չորսից գրուած: Հասաւ մեզ մարտ ամսի վերջում և պատճառեց մեզ շատ մեծ ուրախութիւն: Երբեք չեմք մեր բարձր մտադրութիւնը՝ հրատարակել Հայոց գրականութեան մասին տեղեկութիւններ և գրաւոր հաղորդակցութեան մէջ մտնել ձերդ բարեկենդակեան հետ: մեր հոգւոյ հաշիւը ցնեացրեց ինչպէս անմահական նեկտար: Սակայն շնայած այդ ամենին ցաւ է մեզ համար, որ մենք կրկնուած թաղմամբ պատուհանների պատճառաւ որոնց հազար տարիների ժամանակաշրջում ենթակայ է գտնուել մեր հայրենիքը, անկարող ենք այժմ կատարեալ յագեցումն տալ ձեր յանկացած հարցերի գովելի ծառային:

Որովհետեւ երբ մեր կաթուղիկոսական աթոռը և հայկական թագաւորութիւնը այստեղից փոխադրուեցին Կիլիկիայի կողմերը (այն է՝ Փրկչի 1113 թուից մինչև այժմ), այն ժամանակ մեր ազգի հեղինակները, գրականութիւնը, գրքերը, վանքերը, գրադարանները և մեր փառքն ու բարօրութիւնը անսկիւն նեկոթիւններ և հայաձանքներ կրեցին այն յարձակումներից և գերեմարութիւններից, որոնցով նեղուծ էին մեզ Յոյները, Մոնղոլները, Թաթարները, Պարսիկները, Օսմանցիները և Վրաց թագաւորները: Ինչպէս թուրք ցեղը 1170 թուին Եսթրէբում կրակի մատնեց Բաշքիկ քաղաքը, ուր 10,000 աւելի մեր ազգի գրքերից ոչնչացան: 1188 և 1197 թուերին Յոյն կայսրները Հայաստանին անսելի նեղութիւններ են պատճառել: 1380 թուին երբ Թաթարներն ընկաւը 20 տարուց աւելի ամբողջ Հայաստանը աւերելուց յետոյ մեր լեզուով բոլոր գրքերը ժողովեց միասին և այդ բոլորը ուղարկեց Սամարկանդ քաղաքը և կողպեց մի աշտարակի մէջ: և պատժում են: որ մինչև այժմ էլ այնտեղ են:

Նրանից յետոյ ուրիշ շատ պարսիկ ընտելուներ մեր հայրենիքին հասցրին անհամար վերքեր: Սկսեցաւ 40 տարի: Հաս թամասպը 50 տարի: Հաս Արքաւը 30 տարի: Նաղիր Հահը 20 տարի: և ուրիշները գեա մինչև օրս շարունակում են: Ելդպիսի կոտորածներով և գերեմարութիւններով Հայոց ազգն ու գրականութիւնը այնքան ցրուեցին, որ մեր նախնիների հաշար գրքից մէկը հազիւ է մեր ձեռքը հասել: Արոնք մեզ են հասել, աշխատում ենք, քանի որ մեր երկիրը Ռուսաց Մեծագոր Կայսր իշխանութեան ներքոյ է ընկել, հաւաքել ի մասին և հիմք դնել կանոնաւոր գրադարանի ուստի թող 2երդ բարեկենդակեանը իրան վերաւորուած չզգայ և թաւականանայ իւր հարցերի այսօր փոքր տեղեկութիւններով:

1. Բուն Ռուսաստանում միայն երկու վանք կայ, մէկը Նախիջևանում, միւսը Կրիմում: Բայց երկուսն էլ չունին գրադարան: Իսկ այստեղ, մեր երկրի մէջ, 100-ից աւելի վանքեր կան, սակայն զոցանից միայն հազիւ 10-ի մէջ միաբանութիւն կայ, միւսները անապատ են և աւերակ:

2. Հայերը զպրոցներ ունին Մոսկվայում, Հաշտարխանում, Կիլիկիայում, Նոր-Նախիջևանում, Բիշնևանում, Կրիմում, Արեւանում, Ախալցխայում և այստեղ Էջմիածնում:

3. Աշակերտները Հայոց լեզուով ուսանում են՝ քերականութիւն, ճարտասանութիւն և կրօնագիտութիւն: միւս բոլոր մասնատիկական և ֆիզիոլոգիքական (physiologisch) գիտութիւնները ուսանում են ռուսերէն լեզուով:

4. Միայն Մոսկվայի ճեմարանի զպրոցն է հարուստ տպագիր և ձեռագիր գրքերով, սակայն մինչև այժմ գեա տեղեկութիւն չունինք թէ որքան և ինչ բաներ, որովհետեւ մեր կաթուղիկոսութեան միայն երկրորդ տարին է: 2երդ բարեկենդակութիւնը կարող է այդ մասին տեղեկութիւն տաւալ ճեմարանի հիմնադիր Պ. Լազարեւնիքից, որոնք այժմ Պետերբուրգում են ապրում: Իսկ միւս ուսումնարանները աղքատ են ձեռագիրներով և թաւականում են միայն տպագիրներով: Իսկ յունարէն և լատիներէն ձեռագիրներ, զոցա հետ միասին հայերէն շատ հազուագիւտ գրքեր մեզից վաղուց են կոտորուել և անհետացել մեր հայրենիքի բազմամիլիաւերութեան ժամանակ, խոտարարոյ բռնաւորների երեսից:

Յանձնելով 2եզ ամենաողորմած Տիրոջ շնորհացը և Աստուածանից հայցելով երջանիկ կեանք հայրենիքի օգտին և գրականութեամբ պարագլուխների համար, մնամք աղօթարար:

Կարուղիկոս Ամենայն Հայոց
Յովհաննէս:

№ 48.

Ի Ս. Էլմիածին 1833. Ապրիլի 24 ին:

Այս կոնդակի մասին կարգացի փոքրիկ նախաթուղիւն Մ. Բրոսէի (Catalogue de la bibliothèque d'Edschmiadzin, St. Petersburg 1840) ցուցակում և նկատելով նրա կարեւորութիւնը ժ. դարու սկզբի Հայոց Դպրոցների և գրադարանների պատմութեան նկատմամբ, անմիջապէս թարգմանեցի, աշխատելով բնագիրն հարազատ պահպանել, որովհետեւ Հայոց կաթուղիկոսարանում զժախտարար իշխող մուսուր աղքատութեան հետաքրքիր մի նմուշ է: Գերմաներէն թարգմանութիւնը տպուած է Դորպատի տարեգրութեանց մէջ (Dorpat. Jahrbücher für Litteratur, Statistik und Kunst, Band I. 1833, Riga und Dorpat, pag. 90) և ունի այս վերնագիրը.

„Schreiben des Patriarchen Iohannes von Armenien an den Professor Glossios in Dorpat“, և համապատասխանաբար:

խմբագրական ծանօթութիւն. «Մենք այս նամակը հրատարակում ենք համեմատ հայերէն բնագրի բառացի թարգմանութեան, որ կատարեց այստեղ ուսանող հայազգի Խաչատուր Արովեանը (Chatschatur Abovian)»։ Այդ նամակի շարժառիթը եղել է պրոֆեսոր Գլուխովի Վաթուղիկոսին ուղղած գրութիւնը, նա յոյս ուներ որ Լիբմիսնի վանքումն էլ կգտնուեն լատիներէն և յունարէն գրութիւններ, թարգմանութեան ձեռագիրներ, ինչպիսեք գտնուել էին Վենետիկի ս. Վազարի Հայոց վանքումս։

Այս յօդուածը լիջում և բովանդակութիւնը առաջ է բերում նաև Շրուսթի հայագէտը իւր «Հայոց լեզուի ուսումն Եւրոպայում» աշխատութեան մէջ (Տես Բաղմալեպ 1893 էջ 180), իսկ մի ուրիշ տեղ (Բաղմ. էջ 382) խօսում է Լանգթամուրի Հայաստանի գրադարանների կողոպուտի մասին, որոնց ձեռագիրները իբրև թէ տարել Սամարղանդում ի մի է ժողովել մի բերդի մէջ։ Յայտնի Պետերման հայագէտը 1852 մինչև 1855 ճանապարհորդելով արևելքում՝ հրատարակել է երկհատոր՝ «Ճանապարհորդութիւն Արևելքում», և որովհետև Գրիգոր վարդապետ Գափամաճեանի՝ Նիշիէի ֆրանսերէն թարգմանութեան (1841 թ.) յառաջարկից զիտէր Լանգթամուրի մասին պատմածը, Պարսկաստանում եղած ժամանակ հետաքրքրուում է այդ խնդրով, բայց ոչ մի տեղեկութիւն չի կարողանում ստանալ։ Լրութեան համար յիշենք, որ այդ մասին գրել է Ֆելիքս Նեւ հայագէտը՝ Université Catholique թերթի XX հատորի 491 էջում, կրկնելով Գափամաճեանի գրածը, իսկ երկու ուրիշ Եւրոպացի ճանապարհորդ, հունգարացի Վամպերին իւր 1865 թ. Միջին Ասիայում կատարած ճանապարհորդութեան ժամանակ և անդրիացի Հանրի Լագորէլ 1885 թ.ում՝ Սամարղանդում յատկապէս հարցել են այդ մասին տեղացիներին և ոչինչ չեն գտել։

Անգղիացին ասում է. (Russian Central Asia էջ 588) «Ոչինչ չտեսայ կամ լսեցի, որ ինձ թոյլ տար ընդունելու թէ այդպիսի մի բան գոյութիւն է ունեցել»։

Աւելացնենք և այս. երբ անցեալ տարի գրաւուեց Մանջուրիայի հռչակաւոր Մուկդէն քաղաքը իւր հարուստ գրադարանով և հնութիւններով, որոնց ուսումնասիրութիւնից արևելքի պատմութեան համար շատ բան է սպասուում, մի մասնաւոր շրջանում, առանց հարկաւ լրջութեան, խօսում էր. եթէ Սամարղանդում հայ գրքերի կամ գրադարանի հետքեր չգտնուեցան, արդեօք չի կարելի սպասել որ Մուկդէնի գրքերի ժողովածուի մէջ կգտնուեն նաև հայերէն ձեռագիրներ։ Գերի վարած հայերի բազմութիւնը Թաթարստանում և մանաւանդ Մոնղոլիայի խորքերում ապահով է և հայ գրագիտութեան գոյութիւնը այդ կողմերում հաս-

տատուել է, քանի որ վերջին տարիներումս ուսական Սեմիրեչինսկ նահանգում գտնուեց հայերէն-ասորիերէն արձանագրութիւն, Յովհաննէս Եպիսկոպոսի գերեզմանքարի վերայ, Այդ արձանագրութիւնը, ինչպէս յայտնի է, 1323 թուականից առաջին անգամ հրատարակեց Պր. Մառը ուսերէն, իսկ հայերէն թարգմանուեց Հանդէս Ամսորեայի 1895 տարուայ թիւ 2 և Արարատ նոյն տարուայ առաջին համարում։ Այս առաջին հաստատուն վկայականը մի տեսակ ուղեցոյց է ապագայ ակընկալութեանց, Սակայն աւելորդ չէ կրկնելը, որ սա թեթեւ էնթադրութիւն է։

Պոնդակի բովանդակութեան մասին շատ բան չի կարելի ասել, Մայր Աթոռի միաբանութիւնը իւր Վաթուղիկոսով մեզնից մօտ 60 տարի առաջ Եւրոպացի մի գիտնականի խնդրած չորս պարզ հարցերին. 1. Հայերը քանի վանք ունին, 2. քանի գպրոց և որտեղ, 3. աշակերտները ինչ են սովորում և 4. ինչ տեղերում կան ձեռագիր և տպագիր գրադարաններ, — պատասխան է տալիս ամենախեղճ, ընդհանուր, և անհաստատ բառերով, և դա պարզ ապացոյց է թէ որքան անկարելորդ են եղել ժամանակի հոգևորականների համար նման կենսունակ խնդիրները, Իսկ Ամենայն Հայոց Վաթուղիկոսը զպրոցականի պէս արգարանում է, որ ինքը միայն երկու տարի է կաթուղիկոսութիւն արել, ուստի ժամանակ չէ ունեցել Լազարեան ձեմարանից տեղեկանալու, թէ այնտեղ որքան տպագիր և ձեռագիր գրքեր կան, Հարկաւ այդ խեղճութեան և մտքի աղքատութեան արդիւնք պէտք է համարել, որ երկրորդ պատասխանի մէջ հայ զպրոցներ ունեցող քաղաքների անունները թուելիս, անկասկած զիտուութեամբ, մոռացութեան է արուել Թիֆլիզը՝ իւր Ներսիսեան դպրանոցով, այն ժամանակներում Լազարեան ձեմարանի հետ միակ հաստատութիւնը, որ արժանապէս կարող էր զպրոց կոչուել։

Մեսրոպ Վարդապետ